Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2017 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 26-ԻՆ ԺԱՄԸ 10:30-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

քաղ. Երևան
Մասնակցում էին՝

Խորհրդի անդամներ՝

Կ. Կարապետյան	ՀՀ վարչապետ, խորհրդի նախագահ
Վ. Ստեփանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար
Դ. Հարությունյան	ՀՀ արդարադատության նախարար
Վ. Արամյան	ՀՀ ֆինանսների նախարար
Ս. Կարայան	ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարար
Հ. Հովսեփյան	ՀՀ Նախագահի վերահսկողական ծառայության ղեկավար
Հ. Ասլանյան	ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ
Ա. Թաթոյան	ՀՀ մարդու իրավունքների պաշտպան
Ս. Սահակյան	Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի նախագահ
Վ. Մանուկյան	ՀՀ հանրային խորհրդի նախագահ
Է. Երիցյան	Հայաստանի համայնքների միության նախագահ
Կ. Զադոյան	Հայաստանի քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հակակոռուպցիոն կոալիցիայի ներկայացուցիչ, «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ նախագահ
Ս. Այվազյան	«Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ-ի նախագահ
Լ. Դոյդոյան	«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի նախագահ

Հրավիրվածներ՝

Ա. Սարգսյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավարի առաջին տեղակալ
Կ. Արեյան	Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ
Ս. Խաչատրյան	ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ
Տ. Խաչատրյան	ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ
Մ. Ղամբարյան	ՀՀ միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարարի տեղակալ
Ա. Նազարյան	ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ
Կ. Թամազյան	ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
Ս. Քրմոյան	ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
Կ. Իսախանյան	ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի տեղակալ
Բ. Դեմիրխանյան	ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի տեղակալ
Խ. Հակոբյան	ՀՀ բնապահպանության նախարարի տեղակալ
Դ. Սահակյան	ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ
Շ. Հարությունյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ
Ա. Հարությունյան	ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության տնօրենի տեղակալ
Վ. Եղիազարյան	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության պետի տեղակալ
Ա. Սաքապետոյան	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ
Ա. Պետրոսյան	ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի տեղակալ

Խ. Խաչիկյան	ՀՀ կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի նախագահի տեղակալ
Վ. Գասպարյան	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետի տեղակալ
Ս. Վասիլյան	ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի նախագահի տեղակալ
Հ. Զոհրաբյան	ՀՀ վարչապետի օգնական
Ֆ. Զաքարյան	ՀՀ սփյուռքի նախարարության աշխատակազմի ղեկավար
Ա. Կիրակոսյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի ղեկավար
Ա. Բաղդասարյան	ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի ներկայացուցիչ
Ռ. Փիլոյան	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ներկայացուցիչ
Ա. Խաչատրյան	ՀՀ արտաքին գործերի նախարարության ներկայացուցիչ
Է. Վարդանյան	ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության ներկայացուցիչ
Ա. Խաչատրյան	ՀՀ մշակույթի նախարարության ներկայացուցիչ
Վ. Աճեմյան	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության ներկայացուցիչ
Թ. Թորոսյան	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության ներկայացուցիչ
Մ. Գալստյան	ՀՀ արդարադատության նախարարության ներկայացուցիչ
Մ. Թովմասյան	ՀՀ կառավարության աշխատակազմի հակակոռուպցիոն ծրագրերի մոնիթորինգի բաժնի առաջատար մասնագետ
Ա. Գրիգորյան	ՀՀ կառավարության աշխատակազմի հակակոռուպցիոն ծրագրերի մոնիթորինգի բաժնի փորձագետ

Ա. Գրիգորյան	ԱՄՆ ՄԶԳ-ի (USAID) ներկայացուցիչ
Լ. Հակոբյան	ԱՄՆ ՄԶԳ-ի (USAID) ներկայացուցիչ
Պ. Դինայգեր	Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) ներկայացուցիչ
Ա. Շագաֆյան	Հայաստանի քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հակակոռուպցիոն կոալիցիայի ներկայացուցիչ
Ա. Մելքոնյան	Հայաստանի քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հակակոռուպցիոն կոալիցիայի ներկայացուցիչ
Ս. Վարդանյան	Հայաստանի քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հակակոռուպցիոն կոալիցիայի ներկայացուցիչ
Գ. Գրիգորյան	Հայաստանի քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հակակոռուպցիոն կոալիցիայի ներկայացուցիչ
Մ. Զադոյան	Հայաստանի քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հակակոռուպցիոն կոալիցիայի ներկայացուցիչ
Լ. Մինասյան	«Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան» ՀԿ-ի ներկայացուցիչ
Լ. Նազարյան	«Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան» ՀԿ-ի ներկայացուցիչ
Դ. Ամիրյան	«Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան» ՀԿ-ի ներկայացուցիչ
Գ. Պողոսյան	Գործարարության աջակցման գրասենյակի ղեկավար
Լ. Ղալթախչյան	Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի ներկայացուցիչ
Հ. Տիգրանյան	Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի ներկայացուցիչ
Ա. Մանուկյան	ՓՄՁ ասոցիացիայի խորհրդի նախագահ

Մ. Ատովմյան	Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդին կից փորձագիտական հանձախմբի փորձագետ
Ա. Մարգարյան	Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդին կից փորձագիտական հանձախմբի փորձագետ
Ս. Ավագյան	Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդին կից փորձագիտական հանձախմբի փորձագետ
Ս. Սողոմոնյան	Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդին կից փորձագիտական հանձախմբի փորձագետ
Կ. Մարտիրոսյան	Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդին կից փորձագիտական հանձախմբի ֆինանսական փորձագետ

1. Ոստիկանության կողմից քաղաքացիներին ծառայությունների մատուցման ոլորտում հայտնաբերված կոռուպցիոն ռիսկերի և դրանց չեզոքացմանը (նվազեցմանը) ուղղված գործողությունների ծրագրի ներկայացում

(Աննա Մարգարյան, Վարդան Եղիազարյան, Կարեն Կարապետյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդին կից փորձագիտական հանձնախմբի փորձագետ Աննա Մարգարյանին՝ ՀՀ կառավարության աշխատակազմի, ՀՀ արդարադատության նախարարության, ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության, ՀՀ ֆինանսների նախարարության մասնագետների, Հայաստանի քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հակակոռուպ-ցիոն կոալիցիայի և շահագրգիռ կողմերի հետ համատեղ ևս մեկ անգամ քննարկել ներկայացված ծրագիրը և, մինչև 2017 թվականի հոկտեմբերի 3-ը, գործողությունների ծրագրի վերջնական տարբերակը ներկայացնել ՀՀ կառավարության աշխատակազմ՝ մինչև ՀՀ կառավարության նիստի քննարկմանը ներկայացնելն ապահովելով միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական գնահատականը:

2. Առողջապահության ոլորտում հայտնաբերված կոռուպցիոն ռիսկերի և դրանց չեզոքացմանը (նվազեցմանը) ուղղված գործողությունների ծրագրի ներկայացում

(Սարգիս Ավագյան, Սերգեյ Խաչատրյան, Կարեն Կարապետյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հարցի քննարկումը հետաձգել՝ ՀՀ արդարադատության նախարարության և շահագրգիռ մյուս կողմերի հետ լրացուցիչ քննարկելու և փոխհամաձայնեցնելու, ծրագրի պահանջներն առավել իրատեսական դարձնելու նպատակով՝ մինչև ՀՀ կառավարության նիստի քննարկմանը ներկայացնելն ապահովելով միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական գնահատականը.

2) ՀՀ առողջապահության նախարար Լևոն Ալթունյանին՝ մինչև 2017 թվականի հոկտեմբերի 3-ը՝ համագործակցել Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդին կից փորձագիտական հանձախմբի առողջապահության ոլորտի փորձագետ Սարգիս Ավագյանի հետ և փաստաթղթի վերաբերյալ ներկայացնել կարծիք՝ հաշվի առնելով նախկինում ՀՀ առողջապահության նախարարությունում և ՀՀ կառավարության աշխատակազմում տեղի ունեցած քննարկումների արդյունքները.

3) Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդին կից փորձագիտական հանձախմբի առողջապահության ոլորտի փորձագետ Սարգիս Ավագյանին՝ նախքան խորհրդի նիստը ՀՀ կառավարության աշխատակազմում տեղի ունեցած քննարկումների հիման վրա գործողությունների ծրագրից հանել ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավարի առաջին տեղակալ Արթուր Սարգսյանի առաջարկած կետերը:

3. Կրթության ոլորտում հայտնաբերված կոռուպցիոն ռիսկերի և դրանց չեզոքացմանը (նվազեցմանը) ուղղված գործողությունների ծրագրի ներկայացում

(Մարատ Ատովմյան, Դավիթ Սահակյան, Կարեն Կարապետյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդին կից փորձագիտական հանձնախմբի փորձագետ Մարատ Ատովմյանին՝ ՀՀ կառավարության աշխատակազմի, ՀՀ կրթության և գիտության նախարարության, Երևանի քաղաքապետարանի, Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի, «Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան» ՀԿ-ի և շահագրգիռ այլ կողմերի հետ քննարկել խնդրահարույց հարցերը և, մինչև 2017 թվականի հոկտեմբերի 3-ը, գործողությունների ծրագրի վերջնական տարբերակը ներկայացնել ՀՀ կառավարության աշխատակազմ՝ մինչև ՀՀ կառավարության նիստի քննարկմանը ներկայացնելն ապահովելով միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական գնահատականը:

4. Պետական եկամուտների հավաքագրման ոլորտում հայտնաբերված կոռուպցիոն ռիսկերի և դրանց չեզոքացմանը (նվազեցմանը) ուղղված գործողությունների ծրագրի ներկայացում

(Սյուզաննա Սողոմոնյան, Արմեն Սաքապետոյան, Կարեն Կարապետյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հարցի քննարկումը հետաձգել՝ շահագրգիռ կողմերի հետ լրացուցիչ քննարկելու և փոխհամաձայնեցնելու, ծրագրի պահանջներն առավել իրատեսական դարձնելու համար.

2) փորձագետի կողմից հնչեցված նոր առաջարկությունների հիման վրա լրամշակված գործողությունների ծրագիրը քննարկել ՀՀ կառավարության աշխատակազմի և շահագրգիռ մյուս կողմերի, այդ թվում՝ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ՝ մինչև ՀՀ կառավարության նիստի քննարկմանը ներկայացնելն ապահովելով միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական գնահատականը.

3) Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդին կից փորձագիտական հանձախմբի փորձագետ Սյուզաննա Սողոմոնյանին՝ հաշվի առնել ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավարի առաջին տեղակալ Արթուր Սարգսյանի առաջարկությունները՝ միջոցառումների 1-ին, 8-րդ, 9-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ կետերի վերաբերյալ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ ԿԱՐԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԲԱԺԻՆ ՄԱՐԳԱՐԻՏԱ ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ
/ՔԱՐՏՈՒՂԱՐ/